«ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/1

ք. Քաջարան «26»փետրվար 2018թ.

«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի պաշտոնակատար Հրաչյա Թադևոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի հ
ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետը խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **3 365 211** (երեք միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար՝ երկու հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

3. 3 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցները նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանա նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետնե խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

*8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն այս պայմանագրի շրջանակներում գնումը կիրականացվի անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:*

*Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ | «Նատալի ֆարմ»ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1 | Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2 |
| Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ | Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ |
| Հ/Հ 1570025402170100 | Հ/Հ 1570005065330100 |
| ՀՎՀՀ 09417527 | ՀՎՀՀ 01222567 |
| Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան | տնօրեն՝ Ա.Ասատրյան |
| ________________ | ________________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | Ապրանքի | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գին/ՀՀ դրամ | ընդհանուր գին/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 5 | 3362154 | Դապավերին մոմիկ 0,02գ № 10 | Նիժֆարմ ԲԸ, Ռուսաստան | Դապավերին /պապավերինի հիդրոքլորիդ 20մգ մոմիկներ ուղիղաղիքային | հատ | 58.4 | 5840 | 100 | ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Բակունցի 1, «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Համապատասխան պատվերի | Նախատեսվում է գնել 2018թ-ի ընթացքում, յուրաքանչյուր անգամ պատվիրատուից պատվեր ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գնորդի կողմից պատվի |
| 7 | 33661122 | Պարացետամոլ դ/հ 0.5 գր № 10 | Իրբիտսկի քիմիադեղագործական գործարան ԲԲԸ, Ռուսաստան | Պարացետամոլ դ/հ 500 մգ | հաբ | 4.29 | 12870 | 3000 | | | |
| 8 | 33661122 | պարացետամոլ, նապրոքսեն, կոֆեին, դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ), ֆենիրամին (ֆենիրամինի մալեատ) 325մգ+100մգ+50մգ+40մգ+10մգ դեղահատեր թաղանթապատ Պենտալգին թ/պ դ/հ № 24 | OՏՍՖարմ ՀԲԸ, Մոսկվա, Ռուսաստան | պարացետամոլ, նապրոքսեն, կոֆեին, դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ), ֆենիրամին (ֆենիրամինի մալեատ) 325մգ+100մգ+50մգ+40մգ+10մգ դեղահատեր թաղանթապատ | հաբ | 70.46 | 56368 | 800 | | | |
| 9 | 33691176 | Ցիկլոպենտոլատ / ցիկլոպենտոլատի հիդրոքլորիդ 10մգ/մլ; պլաստիկե սրվակ-կաթոցիկ | Լիկվոր ՓԲԸ, Հայաստան | Ցիկլոպենտոլատ / ցիկլոպենտոլատի հիդրոքլորիդ 10մգ/մլ; պլաստիկե սրվակ- | ֆլակոն | 2666.25 | 39993.75 | 15 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 5մլ ակնակաթիլներ՝ Պենտատրոպ ակնակաթիլներ 1% № 10 | | կաթոցիկ 5մլ ակնակաթիլներ՝ | | | | | | | ռված քանակին և տեսակին համապատասխան: |
| 15 | 33621310 | Տրիմետազիդին /տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ 35մգ դեղահատեր երկարատև ձերբազատմամբ՝ թաղանթապատ Մետալ MR № 60 | Ղոլֆարմեքս Ս. Ա, Լեհաստան | Տրիմետազիդին /տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ 35մգ դեղահատեր երկարատև ձերբազատմամբ թաղանթապատ | հատ | 23 | 6900 | 300 | | | |
| 16 | 33621480 | Պերինդոպրիլ /պերինդոպրիլի արգինին 5մգ դեղահատեր թաղանթապատ՝ Պրեստարիում դ/հ 5 մգ № 30 | Լես Լաբորատորիես Սերվիե Ինդուստրի, Ֆրանսիա | Պերինդոպրիլ /պերինդոպրիլի արգինին 5մգ դեղահատեր թաղանթապատ | հատ | 122.88 | 491520 | 4000 | | | |
| 18 | 33661147 | Նեոստիգմին /նեոստիգմինի մեթիլսուլֆատ 0,5մգ/մլ; 1մլ, լուծույթ ներարկման՝ Պրոզերին ամպ. 0,05% 1 մլ № 10 | Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, Ուկրաինա | Նեոստիգմին /նեոստիգմինի մեթիլսուլֆատ 0,5մգ/մլ; 1մլ, լուծույթ ներարկման | սրվակ | 39.99 | 7998 | 200 | | | |
| 20 | 33661112 | Պրոպոֆոլ 10մգ/մլ; 20մլ , Պրոպոֆոլ-Լիպուրո ամպ. ն/ե 20 մլ 10 մգ/մլ № 5 | Բ. Բրաուն Մելսունգեն ԱԳ, Գերմանիա | Պրոպոֆոլ 10մգ/մլ; 20մլ | Սրվակ | 690 | 69000 | 100 | | | |
| 22 | 33691176 | Ռաբեպրազոլ /ռաբեպրազոլ նատրիում 20մգ; դեղահատեր աղալույծ թաղանթապատ՝ Նոֆլյուկս դ/հ 20 մգ № 28 | | Ռաբեպրազոլ /ռաբեպրազոլ նատրիում 20մգ; դեղահատեր աղալույծ թաղանթապատ՝ | հատ | 219.86 | 13191.6 | 60 | | | |
| 23 | 33691176 | Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ 3,5գ+2,5գ+2,9գ+10գ; փաթեթիկներ 18,9գ,դեղափոշի դեղաչափված՝ Ռեգիդրոն դ/փոշի փաթ. 18,9գ № 1 | Օրիոն Քորփորեյշն, Ֆինլանդիա | Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ 3,5գ+2,5գ+2,9գ+10գ; փաթեթիկներ 18,9գ,դեղափոշի դեղաչափված | հատ | 233 | 46600 | 200 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | 33671113 | սալբուտամոլ (սալբուտամոլի սուլֆատ) 100մկգ/դեղաչափ; ալյումինե տարա դեղաչափիչ մխոցով (200 դեղաչափ) ցողացիր շնչառման դեղաչափավորված Սալբուտամոլ ցողացիր 100 մկգ/ դոզա 200 դոզա | Բիոնֆարմ, Ռուսաստան | սալբուտամոլ (սալբուտամոլի սուլֆատ) 100մկգ/դեղաչափ; ալյումինե տարա դեղաչափիչ մխոցով (200 դեղաչափ) ցողացիր շնչառման դեղաչափավորված | ֆլակոն | 1000 | 3000 | 3 | | | |
| 31 | 33651135 | քլորամֆենիկոլ 10մգ/գ; 25գ ալյումինե պարկուճ նրբամածուկ Մինտոմիցինի մրբամածուկ 10% 25 մգ | Էսկո-ֆարմ, Հայաստան | քլորամֆենիկոլ 10մգ/գ; 25գ ալյումինե պարկուճ նրբամածուկ | հատ | 334.4 | 10032 | 30 | | | |
| 32 | 33691176 | Դիոսմեկտիտ 3գ փաթեթիկներ 3.76գ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի նարնջի համով Սմեկտա փաթ. № 10 | Բոֆուր Իպսեն Ինդաստրի, Ֆրանսիա | Դիոսմեկտիտ 3գ փաթեթիկներ 3.76գ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի նարնջի համով | հատ | 164.23 | 14780.7 | 90 | | | |
| 33 | 33691240 | Արյունատրամալուծիչ հորթի արյունից, սպիտակուցազերծ 42,5մգ/մլ ամպուլներ 2մլ լուծույթ ն/ե և մ/մ ներարկման Սոլկոսերիլ ամպ. 2 մլ № 25 | ՄԵԴԱ Ֆարմասյուտիկալս, Շվեցարիա | Արյունատրամալուծիչ հորթի արյունից, սպիտակուցազերծ 42,5մգ/մլ ամպուլներ 2մլ լուծույթ ն/ե և մ/մ ներարկման | սրվակ | 895 | 89500 | 100 | | | |
| 34 | 33691176 | Ցիտիկոլին /ցիտիկոլին նատրիում 250մգ/մլ; ամպուլնէշր 4մլ, լուծույթ ներարկման Սոմազինա ն/ե և մ/մ ամպ. 1000 մգ 4 մլ № 5 | Ֆերեր Ինտերնեյշընլ, ՍԱ, Իսպանիա | Ցիտիկոլին /ցիտիկոլին նատրիում 250մգ/մլ; ամպուլնէշր 4մլ, լուծույթ ներարկման | Սրվակ | 2175 | 217500 | 100 | | | |
| 36 | 33671115 | Սուլֆացեթամիդ/սուլֆակամֆոկային, պրոկայինի հիմք 49,6մգ/մլ+50,4մգ/մլ; ամպուլներ 2մլ, լուծույթ ներարկման Սուլֆոկամֆոկային ամպ. 10% 2 մլ № 10 | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, Հայաստան | Սուլֆակամֆորաթթու, պրոկայինի հիմք 49,6մգ/մլ+50,4մգ/մլ; ամպուլներ 2մլ, լուծույթ ներարկման | սրվակ | 55.99 | 27995 | 500 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 37 | 33691236 | Քլորոպիրամին / քլորոպիրամինի հիդրոքլորիդ 25մգ Սուպրաստինին դ/հ 25 մգ № 20 | Լեկխիմ-Խարկով ԲԸ, Ուկրաինա | Քլորոպիրամին / քլորոպիրամինի հիդրոքլորիդ 25մգ | հատ | 41.68 | 12504 | 300 | | | |
| 38 | 33661125 | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ 2500մգ/5մլ+10մգ/5մլ+0,1մգ/5 մլ; 5մլ լուծույթ ներարկման՝ Սպազմատոն ամպ. 5 մլ № 10 | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ, Բելառուս | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ 2500մգ/5մլ+10մգ/5մլ+0,1մգ/5մլ; 5մլ լուծույթ ներարկման | հատ | 138.99 | 555960 | 4000 | | | |
| 39 | 33661125 | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ 500մգ+5մգ+0,1մգ; Սպազմատոն դ/լ № 50 | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ, Բելառուս | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ 500մգ+5մգ+0,1մգ; | սրվակ | 13.99 | 6995 | 500 | | | |
| 41 | 33621270 | Մենթոլի լուծույթ, մենթիլ իզովալերաթթվում 60մգ դեղահատեր ենթալեզվային՝ Վալիդոլ դ/հ 60 մգ № 10 | Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, Ուկրաինա | Մենթոլի լուծույթ, մենթիլ իզովալերաթթվում 60մգ դեղահատեր ենթալեզվային | հատ | 8.31 | 2493 | 300 | | | |
| 42 | 33621270 | Մենթոլի լուծույթ, մենթիլ իզովալերաթթվում 100մգ; դեղապատիճներ ենթալեզվային՝ վալիդոլ դ/պ 100 մգ № 50 | Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, Բելառուս | Մենթոլի լուծույթ, մենթիլ իզովալերաթթվում 100մգ; դեղապատիճներ ենթալեզվային | պատիճ | 18.53 | 12971 | 700 | | | |
| 43 | 33621280 | Ֆենոբարբիտալ, էթիլբրոմիզովալերատ 18,4մգ/մլ+18,4մգ/մլ; 20մլ կաթիլներ ներքին | Կրեվել Մոյելբախ ԳմբՀ, Գերմանիա | Ֆենոբարբիտալ, էթիլբրոմիզովալերատ 18,4մգ/մլ+18,4մգ/մլ; 20մլ կաթիլներ ներքին | փաթեթ | 629 | 31450 | 50 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընդունման (լուծույթ) Վալոկորդին 22հլ 20 մլ | | ընդունման (լուծույթ | | | | | | | |
| 44 | 33621110 | Վարֆարին /վարֆարին նատրիում 2,5մգ դեղահատեր՝ Վարֆարին դ/հ 2,5 մգ № 100 | Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, Բելառուս | Վարֆարին /վարֆարին նատրիում 2,5մգ դեղահատեր | հատ | 8.8 | 2640 | 300 | | | |
| 47 | 33691176 | Սպիրոնոլակտոն 25մգ դեղահատեր թաղանթպատ՝ Սպիրոլոն 25մգ դ/հ № 50 | Ռեմեդիկա ՍՊԸ, Կիպրոս | Սպիրոնոլակտոն 25մգ դեղահատեր թաղանթպատ՝ | հատ | 35 | 105000 | 3000 | | | |
| 49 | 33691187 | Վինպոցետին 5մգ/մլ; ամպուլներ 2մլ, լուծույթ ներարկման՝ Վինպոցետին սրվ. 0,5% 2 մլ №10 | Լեկխիմ-Խարկով ԲԸ, Ուկրաինա | Վինպոցետին 5մգ/մլ; ամպուլներ 2մլ | սրվակ | 95.2 | 9520 | 100 | | | |
| 51 | 33611341 | վիտամին B1,վիտամին B2, վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ 5մգ/մլ+2մգ/մլ+2մգ/մլ+3մգ/մլ +20մգ/մլ; ամպուլներ 2մլ , լուծույթ ներարկման՝ Վիտամին B կոմպլեքս ամպ. 2 մլ № 10 | Սոֆարմա ԲԸ, Բուլղարիա | վիտամին B1,վիտամին B2, վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ 5մգ/մլ+2մգ/մլ+2մգ/մլ+3մգ /մլ+20մգ/մլ; ամպուլներ 2մլ , լուծույթ ներարկման՝ | Սրվակ | 155 | 23250 | 150 | | | |
| 53 | 33611341 | պիրիդօքսին 5%1.0՝ պիրիդոքսին ամպ. 5% 1 մլ № 10 | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ՎՎԸ, Հայաստան | պիրիդօքսին 5%1.0 լ-թ ե/մ, մ/մ. ն/ե | սրվակ | 16.79 | 8395 | 500 | | | |
| 54 | 33611341 | ցիանկոբալամին 0,5մգ/մլ; ամպուլներ 1մլ լուծույթ մ/մ կամ ե/մ ներարկման՝ Ցիանկոբալամին ամպ. 500 մգ/մլ 1 մլ № 10 | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ՎՎԸ, Հայաստան | ցիանկոբալամին 0,5մգ/մլ; ամպուլներ 1մլ լուծույթ մ/մ կամ ե/մ ներարկման՝ | սրվակ | 18.68 | 2802 | 150 | | | |
| 55 | 33611341 | Խոլեկալցիֆերոլ 15000ՄՄ/մլ; 10 մլ կաթիլներ ներքին ընդունման՝ Դետրիմեդ կաթ. 15000ՄԵ/մլ 10 մլ | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Հայաստան | Խոլեկալցիֆերոլ 15000ՄՄ/մլ; 10 մլ կաթիլներ ներքին ընդունման՝ | փակոն | 668 | 200400 | 300 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 56 | 33611341 | վիտամին K՝ Կոնակիոն ամպ. մ/մ ն/ե 2 մգ/0,2 մլ+ ներարկիչ № 5 | Ֆ. Հոֆման-Լա Ռոշ ՍՊԸ, Շվեյցարիա, ՍԵՆԵՔՍԻ ՍԱՍ, Ֆրանսիա | Ֆիտոմենադիոն լ-թ ներարկման / ներքին ընդունման 2 մգ/ 0,2 մլ, 0,2 մլ ամպ., և դեղաչափիչ սարք | սրվակ | 1582 | 110740 | 70 | | | |
| 57 | 33631310 | Դիկլոֆենակ /դիկլոֆենակ նատրիում 10մգ/գ; 20գ, դոնդող արտաքին կիրառման՝ Վոլտարեն էմուլգել դոնդող 1 % 20գ | Նովարտիս Քոնսումեր հելթ Ս. Ա. , Շվեյցարիա | Դիկլոֆենակ /դիկլոֆենակ նատրիում 10մգ/գ; 20գ, դոնդող արտաքին կիրառման | հատ | 1824 | 9120 | 5 | | | |
| 58 | 33631310 | Դիկլոֆենակ /դիկլոֆենակ նատրիում 50մգ; մոմիկներ ուղիղաղիքային՝ Դիկլոն մոմիկ 50 մգ № 10 | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Հայաստան | Դիկլոֆենակ /դիկլոֆենակ նատրիում 50մգ; մոմիկներ ուղիղաղիքային | հատ | 91 | 18200 | 200 | | | |
| 59 | 33691176 | Կլեմաստին /կլեմաստինի հիդրոֆումարատ 1մգ համարժեք Տավեգիլ դ/հ 1 մգ № 20 | Իտալիա | | հաբ | 70.35 | 14070 | 200 | | | |
| 60 | 33691176 | Կլեմաստին /կլեմաստինի հիդրոֆումարատ 1մգ/մլ; ամպուլներ 2մլ , լուծույթ ներարկման՝ Կլեմաստին-Բորիմեդ ամպ. 0,1 % 2մլ № 10 | Բորիսովյան բուժպատրաստուկ ների գործարան ԲԲԸ, Բելառուս | Կլեմաստին /կլեմաստինի հիդրոֆումարատ 1մգ/մլ; ամպուլներ 2մլ , լուծույթ ներարկման | սրվակ | 199.2 | 39840 | 200 | | | |
| 61 | 33661119 | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում),տրիացետոնամին 4-տոլուենսուլֆոնատ 500մգ+20մգ; դեղահատեր թաղանթապատ՝ համարժեք Տեմպալգին դ/հ № 20 | Տեմպալգին, Սոֆարմա ԲԸ, Բուլղարիա | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում),տրիացետոնամին 4-տոլուենսուլֆոնատ 500մգ+20մգ; դեղահատեր թաղանթապատ | հաբ | 31.1 | 62200 | 2000 | | | |
| 62 | 33661154 | Տետրակային, տետրակայինի հիդրոքլորիդ 10մգ/մլ; պլաստիկե սրվակ-կաթոցիկ 10մլ ակնակաթիլներ՝ Տետրակային ակնակաթիլներ 1% 10 մլ № 10 | Լիկվոր ՓԲԸ, Հայաստան | Տետրակային, տետրակայինի հիդրոքլորիդ 10մգ/մլ; պլաստիկե սրվակ-կաթոցիկ 10մլ ակնակաթիլներ | ֆլակոն | 2388.96 | 47779.2 | 20 | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 64 | 33691190 | թիոկտաթթու 25մգ/մլ; (5) ամպուլներ 24մլ լուծույթ ներարկման՝ համարժեք Թիոկտացիդ-600 ամպ. 600 մգ/24 մլ № 5 | Մեդա Ֆարմա Գմբ< և Քո. ԿԳ, Գերմանիա | թիոկտաթթու 25մգ/մլ; (5) ամպուլներ 24մլ լուծույթ ներարկման՝ համարժեք | սրվակ | 2057 | 370260 | 180 | | | | |
| 65 | 33691190 | թիոկտաթթու 600 մգ դեղահատեր թաղանթապատ Թիոկտացիդ-600 ՀՌ դ/հ 600 մգ № 100 | Մեդա Ֆարմա Գմբ< և Քո. ԿԳ, Գերմանիա | Ալֆա-լիպոյաթթու դ/հ 600 մգ , ապակե տարայում | հատ | 301 | 30100 | 100 | | | | |
| 66 | 33691226 | Տրամադոլ /տրամադոլի հիդրոքլորիդ 50մգ/մլ ամպուլներ 2մլ, լուծույթ ներարկման՝ Տրամադոլ-Մ ամպ. 5% 2մլ № 5 | «ԽԴՁ Զդորովյե Նարոդու»ՍՊԸ, Ուկրաինա | Տրամադոլ /տրամադոլի հիդրոքլորիդ 50մգ/մլ ամպուլներ 2մլ, լուծույթ ներարկման՝ | սրվակ | 105 | 3150 | 30 | | | | |
| 67 | 33691176 | տրանեքսամաթթու 250մգ; դեղահատեր թաղանթապատ Տրանեկսամ դ/հ 250 մգ № 10 | Նիժֆարմ ԲԸ, Ռուսաստան | տրանեքսամաթթու 250մգ; դեղահատեր թաղանթապատ | հատ | 279.52 | 13976 | 50 | | | | |
| 68 | 33691176 | տրանեքսամաթթու 50մգ/մլ; 5մլ լուծույթ ն/ե կաթիլաներարկման Տրանեկսամ ամպ. ն/ե 50 մգ/մլ 5 մլ № 10 | Նիժֆարմ ԲԸ, Ռուսաստան | տրանեքսամաթթու 50մգ/մլ; 5մլ լուծույթ ն/ե կաթիլաներարկման | սրվակ | 1667.2 | 50016 | 30 | | | | |
| 71 | 33691230 | Տրեոքսեվազինի քսուք 2% 40.0 դոնդող | Բալկանֆարմա—Տրոյան, Բուլղարիա | Տրօքսեռուտին դոնդող արտաքին կիրառման 20 մգ/գ, 40 գ ալյումինե կամ պլաստիկե պարկուճ | Հատ | 1047.03 | 10470.3 | 10 | | | | |
| 73 | 33611160 | Մետոկլոպրամիդ /մետոկլոպրամիդի հիդրոքլորիդի մոնոհիդրատ 5մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ ներարկման՝ Մետոկլոպամիդ ամպ. 5մգ/մլ 2 մլ № 10 | Բորիսովյան բուժպատվաստուկների գործարան ԲԲԸ, Բելառուս | Մետոկլոպրամիդ /մետոկլոպրամիդի հիդրոքլորիդի մոնոհիդրատ 5մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ ներարկման | սրվակ | 50.99 | 25495 | 500 | | | | |
| 75 | 33651118 | ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) 500մգ; ապակե սրվակներ | Բորիսովյան բուժպատվաստուկների գործարան | ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) 500մգ; | ֆլակոն | 164.88 | 8244 | 50 | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | դեղափոշի ներարկման լուծույթի՝ Ցեֆտրիաքսոն և/ե և մ/մ արվ. 0,5 գ | ԲԲԸ, Բելառուս | ապակե սրվակներ դեղափոշի ներարկման լուծույթի | | | | | | | |
| 76 | 33651118 | ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) 1000մգ; ապակե սրվակներ դեղափոշի ներարկման լուծույթի՝ Ցեֆտրիաքսոն և/ե և մ/մ արվ. 1 գ | Բորիսովյան բուժպատվաստուկ ների գործարան ԲԲԸ, Բելառուս | ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) 1000մգ; ապակե սրվակներ դեղափոշի ներարկման լուծույթի | ֆլակոն | 147 | 147000 | 1000 | | | |
| 81 | 33651134 | Ցիպրոֆլօքսացին /ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ 0.3% /աչքի կաթիլ/ Ցիպրոֆլոքսացին ակնակաթիլներ 0,3% 10 մլ | Լիկվոր ՓԲԸ, Հայաստան | Ցիպրոֆլօքսացին /ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ 0.3% /աչքի կաթիլ/ | ֆլակոն | 601.19 | 12023.8 | 20 | | | |
| 82 | 33661126 | Ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին (կոֆեինի մոնոհիդրատ) 240մգ+180մգ+30մգ; դեղահատեր՝ Ցիտրամոն Պ դ/հ № 10 | Իրբիտսկի Քիմիադեղագործ ական գործարան ԲԸՄ Ռուսաստան | Ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին (կոֆեինի մոնոհիդրատ) 240մգ+180մգ+30մգ; դեղահատեր | հատ | 4.2 | 2100 | 500 | | | |
| 83 | 33641300 | պրոգեստերոն 200մգ; դեղապատիճներ՝ Ուտրոժեստան դ/պ 200 մգ № 14 | Սինդեա Ֆարմա ՍԼ, Իսպանիա | պրոգեստերոն 200մգ; դեղապատիճներ | հատ | 287.37 | 43105.5 | 150 | | | |
| 89 | 33631300 | Կետոպրոֆեն 2,5%; 30գ, դոնդող | Բորիսովյան բուժպատվաստուկ ների գործարան ԲԲԸ, Բելառուս | Կետոպրոֆեն 25մգ/գ; 30գ, դոնդող | հատ | 624 | 6240 | 10 | | | |
| 91 | 33621210 | երկաթ (III)-հիդրօքսիդի դեքստրանային համալիր 100մգ; դեղահատեր ծամելու՝ Ֆերրում Լեկ ծամելու դ/հ 100 մգ № 30 | Լեկ դ. դ., Սլովենիա | երկաթ (III)-հիդրօքսիդի դեքստրանային համալիր 100մգ; դեղահատեր ծամելու | հատ | 88.99999 | 4450 | 50 | | | |
| 92 | 33691176 | երկաթ (III)-հիդրօքսիդի դեքստրանային համալիր 50մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ մ/մ ներարկման | Լեկ դ. դ., Սլովենիա | երկաթ (III)-հիդրօքսիդի դեքստրանային համալիր 50մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ | սրվակ | 685 | 34250 | 50 | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ֆերրում Լեկ ամպ. 100 մգ/2 մլ № 50 | | մ/մ ներարկման | | | | | | |
| 93 | 33631390 | Նոնիվամիդ, նիկոբօքսիլ, 4մգ/գ+25մգ/գ; 20գ ալյումինե պարկուճ և ներդրուկ, քսուք համարժեք Ֆինալգոն քսուք 20 գ | Բերինգեր Ինգելհայմ Ֆարմա, Գերմանիա | Նոնիվամիդ, նիկոբօքսիլ, 4մգ/գ+25մգ/գ; 20գ ալյումինե պարկուճ և ներդրուկ, քսուք | Հատ | 2039.2 | 20392 | 10 | | |
| 94 | 33621730 | Վերապամիլ /վերապամիլի հիդրոքլորիդ 2,5մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ ներարկման՝ Վերապամիլ ամպ. 0,25 % 2 մլ № 10 | Ալկալոիդ, Մակեդոնիա | Վերապամիլ /վերապամիլի հիդրոքլորիդ 2,5մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ ներարկման՝ | սրվակ | 463.2 | 46320 | 100 | | |
| 101 | 33691176 | Էնօքսապարին (էնօքսապարինի նատրիումական աղ), 60մգ/0,6մլ; (2) նախալցված ներարկիչներ 0,6մլ, լուծույթ ներարկման՝ Կլեքսան պատրաստի ներարկիչ 6000 ՄՄ 0,6 մլ № 1 | Սանոֆի-Ավենտիս Ֆրանս, Ֆրանսիա | Էնօքսապարին (էնօքսապարինի նատրիումական աղ), 60մգ/0,6մլ; (2) նախալցված ներարկիչներ 0,6մլ, լուծույթ ներարկման՝ | Հատ | 3988 | 119640 | 30 | | |
| 103 | 33691176 | Նիտրոֆուրալ փոշի 0.02 100մգ՝ Ֆուրացիլին 0,02 գ 100 մլ | Ամիկուս Հայաստան | Նիտրոֆուրալ փոշի 0.02 100մգ | Հատ | 95.2 | 28560 | 300 | | |

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

***Ծանոթություն**

ա. 2.5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2.5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

դ.Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:

***Ծանոթություն** – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

* Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :

****Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք,Քաջարան, Բակունցի 1 «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ , աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:*

*****Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:*

*****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ | «Նատալի ֆարմ»ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1 | Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2 |
| Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ | Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ |
| Հ/Հ 1570025402170100 | Հ/Հ 1570005065330100 |
| ՀՎՀՀ 09417527 | ՀՎՀՀ 01222567 |
| Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան | տնօրեն՝ Ա.Ասատրյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 2
« 26 » փետրվար 2018 թ. կնքված
ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 5 | 3362154 | Պապավերին սռմիկ 0,02գ № 10 | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 7 | 33661122 | Պարացետամոլ դ/հ 0.5 գր № 10 | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 8 | 33661122 | պարացետամոլ, նապրոքսեն, կոֆեին, դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ), ֆենիրամին (ֆենիրամինի մալեատ) 325մգ+100մգ+50մգ+40մգ+10մգ դեղահատեր թաղանթապատ Պենտալգին թ/պ դ/հ № 24 | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 9 | 33691176 | Ցիկլոպենտոլատ / ցիկլոպենտոլատի հիդրոքլորիդ 10մգ/մլ; պլաստիկե սրվակ-կաթոցիկ 5մլ ակնակաթիլներ Պենտատրոպ ակնակաթիլներ 1% № 10 | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 15 | 33621310 | Տրիմետազիդին /տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ 35մգ դեղահատեր երկարատև ձերբազատմամբ թաղանթապատ Մետալ MR № 60 | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | 33621480 | Պերինդոպրիլ /պերինդոպրիլի արգինին 5մգ դեղահատեր թաղանթապատ Պրեստարիում դ/հ 5 մգ № 30 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 18 | 33661147 | Նեոստիգմին /նեոստիգմինի մեթիլսուլֆատ 0,5մգ/մլ; 1մլ, լուծույթ ներարկման Պրոզերին ամպ. 0,05% 1 մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 20 | 33661112 | Պրոպոֆոլ 10մգ/մլ; 20մլ , Պրոպոֆոլ-Լիպուրո ամպ. ն/ե 20 մլ 10 մգ/մլ № 5 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 22 | 33691176 | Ռաբեպրազոլ /ռաբեպրազոլ նատրիում 20մգ; դեղահատեր աղալույծ թաղանթապատ Նոֆլյուկս դ/հ 20 մգ № 28 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 23 | 33691176 | Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ 3,5գ+2,5գ+2,9գ+10գ; փաթեթիկներ 18,9գ,դեղափոշի դեղաչափված Ռեգիդրոն դ/փոշի փաթ. 18,9գ № 1 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 29 | 33671113 | սալբուտամոլ (սալբուտամոլի սուլֆատ) 100մկգ/դեղաչափ; ալյումինե տարա դեղաչափիչ մխոցով (200 դեղաչափ) ցողացիր շնչառման դեղաչափավորված Սալբուտամոլ ցողացիր 100 մկգ/դոզա 200 դոզա | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 31 | 33651135 | քլորամֆենիկոլ 10մգ/գ; 25գ ալյումինե պարկուճ նրբամածուկ Սինտոմիցինի մրբամածուկ 10% 25 մգ | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 32 | 33691176 | Դիոսմեկտիտ 3գ փաթեթիկներ 3.76գ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի նարնջի համով Սմեկտա փաթ. № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 33 | 33691240 | Արյունատրամալուծից հորթի արյունից, սպիտակուցազերծ 42,5մգ/մլ ամպուլներ 2մլ լուծույթ ն/ե և մ/մ ներարկման Սոլկոսերիլ ամպ. 2 մլ № 25 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 34 | 33691176 | Ցիտիկոլին /ցիտիկոլին նատրիում 250մգ/մլ; ամպուլնե2ր 4մլ, լուծույթ ներարկման Սոմազինա ն/ե և մ/մ ամպ. 1000 մգ 4 մլ № 5 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 36 | 33671115 | Սուլֆակամֆորաթթու, պրոկայինի հիմք 49,6մգ/մլ+50,4մգ/մլ; ամպուլներ 2մլ, լուծույթ ներարկման Սուլֆոկամֆոկային ամպ. 10% 2 մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 10 |
| 37 | 33691236 | Քլորոպիրամին / քլորոպիրամինի հիդրոքլորիդ 25մգ Սուպրաստին դ/հ 25 մգ № 20 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 10 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | 33661125 | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ 2500մգ/5մլ+10մգ/5մլ+0,1մգ/5մլ; 5մլ լուծույթ ներարկման՝ Սպազմատոն ամպ. 5 մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 39 | 33661125 | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ 500մգ+5մգ+0,1մգ; ՝Սպազմատոն դ/ļ № 50 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 41 | 33621270 | Մենթոլի լուծույթ, մենթիլ իզովալերաթթվում 60մգ դեղահատեր ենթալեզվային՝ Վալիդոլ դ/հ 60 մգ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 42 | 33621270 | Մենթոլի լուծույթ, մենթիլ իզովալերաթթվում 100մգ; դեղապատիճներ ենթալեզվային՝ վալիդոլ դ/պ 100 մգ № 50 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 43 | 33621280 | Ֆենոբարբիտալ, էթիլբրոմիզովալերատ 18,4մգ/մլ+18,4մգ/մլ; 20մլ կաթիլներ ներքին ընդունման (լուծույթ)՝ Վալոկորդին 22հl 20 մլ | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 44 | 33621110 | Վարֆարին /վարֆարին նատրիում 2,5մգ դեղահատեր՝ Վարֆարին դ/հ 2,5 մգ № 100 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 47 | 33691176 | Սպիրոնոլակտոն 25մգ դեղահատեր թաղանթապատ՝ Սպիրոլն 25մգ դ/հ № 50 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 49 | 33691187 | Վինպոցետին 5մգ/մլ; ամպուլներ 2մլ, լուծույթ ներարկման՝ Վինպոցետին սրվ. 0,5% 2 մլ №10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 51 | 33611341 | վիտամին B1,վիտամին B2, վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ 5մգ/մլ+2մգ/մլ+2մգ/մլ+3մգ/մլ+20մգ/մլ; ամպուլներ 2մլ , լուծույթ ներարկման՝ Վիտամին B կոմպլեքս ամպ. 2 մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 53 | 33611341 | պիրիդոքսին 5%1.0՝ պիրիդոքսին ամպ. 5% 1 մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 54 | 33611341 | ցիանկոբալամին 0,5մգ/մլ; ամպուլներ 1մլ լուծույթ մ/մ կամ ե/մ ներարկման՝ Ցիանկոբալամին ամպ. 500 մգ/մլ 1 մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 55 | 33611341 | Խոլեկալցիֆերոլ 15000ՄՄ/մլ; 10 մլ կաթիլներ ներքին ընդունման՝ Դետրիմեդ կաթ. 15000ՄԵ/մլ 10 մլ | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 56 | 33611341 | վիտամին K՝ Կոնակիոն ամպ. մ/մ և/ե 2 մգ/0,2 մլ+ ներարկիչ № 5 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 57 | 33631310 | Դիկլոֆենակ /դիկլոֆենակ նատրիում 10մգ/գ; 20գ, դոնդող արտաքին կիրառման` Վոլտարեն էմուլգել դոնդող 1 % 20գ | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 58 | 33631310 | Դիկլոֆենակ /դիկլոֆենակ նատրիում 50մգ; մոմիկներ ուղիղաղիքային` Դիկլոն մոմիկ 50 մգ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 59 | 33691176 | Կլեմաստին /կլեմաստինի հիդրոֆումարատ 1մգ` համարժեք Տավեգիլ դ/հ 1 մգ № 20 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 60 | 33691176 | Կլեմաստին /կլեմաստինի հիդրոֆումարատ 1մգ/մլ; ամպուլներ 2մլ , լուծույթ ներարկման` Կլեմաստին-Բոըիմեդ ամպ. 0,1 % 2մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 61 | 33661119 | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում),տրիացետոնամին 4-տոլուենսուլֆոնատ 500մգ+20մգ; դեղահատեր թաղանթապատ` համարժեք Տեմպալգին դ/հ № 20 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 62 | 33661154 | Տետրակային, տետրակայինի հիդրոքլորիդ 10մգ/մլ; պլաստիկե սրվակ-կաթոցիչ 10մլ ակնակաթիլներ Տետրակային ակնակաթիլներ 1% 10 մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 64 | 33691190 | թիոկտաթթու 25մգ/մլ; (5) ամպուլներ 24մլ լուծույթ ներարկման` համարժեք Թիոկտացիդ-600 ամպ. 600 մգ/24 մլ № 5 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 65 | 33691190 | թիոկտաթթու 600 մգ դեղահատեր թաղանթապատ` Թիոկտացիդ-600 ՀՌ դ/հ 600 մգ № 100 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 66 | 33691226 | Տրամադոլ /տրամադոլի հիդրոքլորիդ 50մգ/մլ ամպուլներ 2մլ, լուծույթ ներարկման` Տրամադոլ-Մ ամպ. 5% 2մլ № 5 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 67 | 33691176 | տրանեքսամաթթու 250մգ; դեղահատեր թաղանթապատ` Տրանեկսամ դ/հ 250 մգ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 68 | 33691176 | տրանեքսամաթթու 50մգ/մլ; 5մլ լուծույթ ն/ե կաթիլաներարկման` Տրանեկսամ ամպ. ն/ե 50 սգ/մլ 5 մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 71 | 33691230 | Տրեոքսեվազինի քսուք 2% 40.0 դոնդող | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 73 | 33611160 | Մետոկլոպրամիդ /մետոկլոպրամիդի հիդրոքլորիդի մոնոհիդրատ 5մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ ներարկման` Մետոկլոպամիդ ամպ. 5մգ/մլ 2 մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 10[illegible] |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 75 | 33651118 | ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) 500մգ; ապակե սրվակներ դեղափոշի ներարկման լուծույթի՝ Ցեֆտրիաքսոն ն/ե և մ/մ արվ. 0,5 գ | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 76 | 33651118 | ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) 1000մգ; ապակե սրվակներ դեղափոշի ներարկման լուծույթի՝ Ցեֆտրիաքսոն ն/ե և մ/մ արվ. 1 գ | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 81 | 33651134 | Ցիպրոֆլօքսացին /ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ 0.3% /աչքի կաթիլ/՝ Ցիպրոֆլոքսացին ակնակաթիլներ 0,3% 10 մլ | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 82 | 33661126 | Ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին (կոֆեինի մոնոհիդրատ) 240մգ+180մգ+30մգ; դեղահատեր՝ Ցիտրամոն Պ դ/հ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 83 | 33641300 | պրոգեստերոն 200մգ; դեղապատիճներ Ուտրոժեստան դ/պ 200 մգ № 14 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 89 | 33631300 | Կետոպրոֆեն 2,5%; 30գ, դոնդող | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 91 | 33621210 | երկաթ (III)-հիդրօքսիդի դեքստրանային համալիր 100մգ; դեղահատեր ծամելու՝ Ֆերրում Լեկ ծամելու դ/հ 100 մգ № 30 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 92 | 33691176 | երկաթ (III)-հիդրօքսիդի դեքստրանային համալիր 50մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ մ/մ ներարկման Ֆերրում Լեկ ամպ. 100 մգ/2 մլ № 50 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 93 | 33631390 | Նոնիվամիդ, նիկոբօքսիլ, 4մգ/գ+25մգ/գ; 20գ ալյումինե պարկուճ և ներդրուկ, քսուք՝ համարժեք Ֆինալգոն քսուք 20 գ | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 94 | 33621730 | Վերապամիլ /վերապամիլի հիդրոքլորիդ 2,5մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ ներարկման՝ Վերապամիլ ամպ. 0,25 % 2 մլ № 10 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 101 | 33691176 | էնօքսապարին (էնօքսապարինի նատրիումական աղ), 60մգ/0,6մլ; (2) նախալցված ներարկիչներ 0,6մլ, լուծույթ ներարկման՝ Կլեքսան պատրաստի ներարկիչ 6000 ՄՄ 0,6 մլ № 1 | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 103 | 33691176 | Նիտրոֆուրալ փոշի 0.02 100մգ՝ Ֆուրացիլին 0,02 գ 100 մլ | | 10% | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ | «Նատալի ֆարմ»ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1 | Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2 |
| Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ | Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ |
| Հ/Հ 1570025402170100 | Հ/Հ 1570005065330100 |
| ՀՎՀՀ 09417527 | ՀՎՀՀ 01222567 |
| Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան | տնօրեն՝ Ն.Ասատրյան |
| ---------------------------- /ստորագրություն/ | ---------------------------- /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |